**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 177

## ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Համայնքային ծառայության մասին" օրենքի 13 հոդվածի 2-րդ կետով, Լերմոնտովո համայնքի ավագանու 04/02/2022 թ-ի թիվ 02 որոշումով և Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 14/10/2025 թ-ի թիվ 05/107,4,1/08633-2025 գրությունով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Լերմոնտովոյի համայնքային ծառայության մրցութային և Ատեստավորման հանձնաժողովների կազմը.

1.Էդիկ Չախալյան - նախագահ /համայնքի ղեկավար/

2.Լիլիթ Քոչարյան - մարզպետարանի ներկայացուցիչ

3.Սամվել Խառատյան - մարզպետարանի ներկայացուցիչ

4.Արտավազդ Բեջանյան - մարզպետարանի ներկայացուցիչ

5.Վիտալի Ասադով - ավագանու անդամ

6.Վասիլի Կորոլյով - ավագանու անդամ

7.Իվան Բոլոտին - ավագանու անդամ

2.Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ղեկավարի 21.02.2022 թ-ի թիվ 20 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 178

## ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով թիվ 20102025-06-0002 վկայականը, քաղաքացի Սուսան Լեվոնի Վարդանյանի դիմումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006 թ-ի թիվ 912-Ն օրենքի հոդվածներով, ՀՀ Քաղաքցիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքով, ՀՀ կառավարության 2005 թ-ի թիվ 2387 որոշման դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ԼՄ Լերմոնտովո համայնքի 3փ. թիվ 3 սպասարկման օբյեկտ փոստային հասցեում գտնվող, այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 255,96քմ մակերեսով 526 250 ՀՀ դրամով, /35-րդ հոդվածի 16-րդ կետի "ա" ենթակետ/ և շինություններով ծանրաբեռնված ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0,30545հա մակերեսով հողամասը 2 419 160 ՀՀ դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել Սուսան Լեվոնի Վարդանյանին:

2.Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները՝ 2 945 410 ՀՀ դրամը, 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3.Համայնքապետարանի առաջատար մասնագետին՝ մեկամսյա ժամկետում Սուսան Լեվոնի Վարդանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով շինությունների և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ